



**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ք. Երևան  
20.12.2021թ.**

**ԲԴԽ-98-Ո-Կ-25**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԶԱՐՈՒՇԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՎԻՐՎԱԾ 20.12.2021 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ  
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑ  
ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Բարձրագույն դատական խորհրդի  
նախագահի պաշտոնակատար*

*Գ. Զհանգիրյանի,*

*մասնակցությամբ՝*

*անդամներ*

*Գ. Բեքմեզյանի,  
Դ. Խաչատրյանի,  
Մ. Մակյանի,  
Ս. Միքայելյանի,  
Լ. Մելիքջանյանի,  
Ս. Չիչոյանի,  
Վ. Քոչարյանի,*

*Արդարադատության նախարարի  
տեղակալ*

*Ե. Թումանյանցի,*

*Արդարադատության նախարարի  
ներկայացուցիչ*

*Գ. Հարությունյանի,*

*Երևան քաղաքի առաջին աստիճանի  
ընդհանուր իրավասության  
դատարանի դատավոր*

*Զ. Նախչարյանի,*

Երևան քաղաքի առաջին արյանի  
ընդհանուր իրավասության դատարանի  
դատավորի ներկայացուցիչ

Ս. Սահակյանի,

քարտուղարությամբ՝

Ա. Շիլաջյանի

դռնբաց նիստում, քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամներ Գ. Բեքմեզյանի և Ս. Միքայելյանի միջնորդությունը՝ լրացուցիչ ապացույց պահանջելու մասին, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որպես լրացուցիչ ապացույց ուսումնասիրել դատավոր Զ. Նախշբարյանի կողմից քննված թիվ ԵԴ/39585/02/19 քաղաքացիական գործը՝ ներառյալ ձայնային կրիչները, ինչի կապակցությամբ անհրաժեշտ համարեց Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԵԴ/39585/02/19 քաղաքացիական գործն ամբողջությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք տվյալ անձանց ազդեցության ոլորտում են՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նիստը հետաձգվում է նաև՝ հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով, որ անհնարին է առանց նշված լրացուցիչ ապացույցի ուսումնասիրման Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զարուհի Նախշբարյանին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը՝ Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում հետաձգել սույն գործով նիստը:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

### **ՈՐՈՇԵՑ**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զարուհի Նախշբարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 20.12.2021 թվականի նիստը հետաձգել և նշանակել սույն թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 15:00-ին:
2. Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԵԴ/39585/02/19 քաղաքացիական գործն ամբողջությամբ:
3. Դատական դեպարտամենտի կողմից թիվ ԵԴ/39585/02/19 քաղաքացիական գործը տրամադրելու համար սահմանել 3-օրյա ժամկետ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

\_\_\_\_\_ **Գ. ԶՀԱՆԳԻՐՅԱՆ**

\_\_\_\_\_ **Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ**

\_\_\_\_\_ **Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

\_\_\_\_\_ **Մ. ՄԱԿՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ**

\_\_\_\_\_ **Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ս. ՉԻՉՈՅԱՆ**

\_\_\_\_\_ **Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**